Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19 -ի N 1230 - Ն որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1.Անունը, ազգանունը.

Արսեն Թորոսյան

2. Զբաղեցրած պաշտոնը.

Առողջապահության նախարար

3. Գործուղման վայրը և ժամկետները.

2019 թվականի հունվարի 28-30-ը, Բելառուսի Հանրապետություն, Մինսկ

4. Հրավիրող կողմը.

Բելառուսի Հանրապետության առողջապահության նախարարություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Երկկողմ բանակցություններ Բելառուսի Հանրապետության առողջապահության նախարարի հետ՝ առավել նախընտրելի, փոխշահավետ փոխգործակցության ուղղություններով համագործակցությունը զարգացնելու նպատակով:

6. Քննարկված թեմաները.

Քննարկված հարցերի լայն շրջանակից հիմնական թեմաներն էին օրգանների փոխպատվաստումը, դեղագործությունն ու դեղարտադրությունը, ինչպես նաև ուռուցքաբանությունը, սիրտ-անոթային վիրաբուժությունը:

Հաշվի առնելով Բելառուսի առաջընթացը տրանսպլանտալոգիայի ասպարեզում՝ այցի ընթացքում քննարկվել են այդ ոլորտում Բելառուսի կողմից Հայաստանին մասնագիտական, իրավական և փորձագիտական աջակցության հնարավորությունները:

Միաժամանակ, կողմերը քննարկել են Հայաստանի քաղաքացիների համար Բելառուսում բուժօգնություն կազմակերպելու ուղղությամբ առկա խնդիրները՝ հաշվի առնելով ԱՊՀ, ԵԱՏՄ երկրների միջև ստորագրված համաձայնագրերը և այլ իրավական ակտեր կիրառելու անհրաժեշտությունը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Այցի ընթացքում քննարկվեցին հետագա երկկողմ համագործակցության ուղղությունները, ձեռք բերվեցին կոնկրետ պայմանավորվածություններ համագործակցության շուրջ: Մասնավորապես, շուտով կողմերը կոնկրետ համագործակցության շուրջ Հուշագիր կստորագրեն՝ Հայաստանում օրգանների փոխպատվաստման ծառայությունը զարգացնելու նպատակով:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպումների ընթացքում պայմանավորվածության հիմնական ուղղություն է եղել օրգանների փոխպատվաստման ոլորտում գործնական համագործակցության ծավալումը, դեղերի ոլորտում համագործակցության զարգացումը: Պայմանավորվածություն է ձեռք բերվել երկու երկրների առաջատար կլինիկաների միջև ստորագրել փոխըմբռնման հուշագիր՝ Հայաստանում օրգանների փոխպատվաստման ծառայությունը զարգացնելու նպատակով: Կողմերը երկկողմ ուղղակի կապեր ստեղծեցին նաև դեղագործության ոլորտում համագործակցությունը խորացնելու նպատակով:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Պայմանավորվող կողմերը ջանքեր են ներդնելու ստանձնած պարտավորություններն իրականացնելու ուղղությամբ: Հանդիպումների ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց ամրապնդել համագործակցող կողմերի միջև առկա փոխշահավետ կապը: Բելառուսական կողմը աշխատանք կտանի նաև իրենց երկրներում մշտական բնակություն հաստատած ու աշխատող ՀՀ քաղաքացիների բուժսպասարկման ոլորտում ծագած խնդիրները լուծելու ուղղությամբ: Պատրաստվելու է նաև երկկողմ Հուշագիր՝ Հայաստանում փոխպատվաստման ծառայությունը զարգացնելու նպատակով ստորագրելու համար: Հուշագիրը նախատեսվում է ստորագրել առաջիկա ամիսներին:

Դեղարտադրության և դեղերի շրջանառության ոլորտում ևս կոնկրետ քայլեր են ձեռնարկվելու միմյանց ընկերությունների միջև գործնական կապերը խորացնելու ուղղությամբ:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

X _____

2019թ. փետրվարի 1